Կատարելապէս հասկանալի է, որ եթէ Պարիզն ունենար ինքնավարութեան իրաւունք և միմիայն ընդհանուր պետական խնդիրներում Ֆրանսայի բոլոր միւս գաւառների հետ կաղմէր մի ամբողջութիւն եթէ նա իրապէս օգտուէր ինքնավարութեան առաւելութիւններից, հիմնւած ընդհանուր և հաւասար ընտրական իրաւունքի վրայ, ճիշտ այնպիսի ինքնավարութեամբ, ինչպիսին որ գոյութիւն ունի Շւէյցարական կանտոններում, կամ չիւսիսային Սմերիկայի միացեալ պետութիւններում, ապա այն ժամանակ, բանւորները, որ այդ քաղաքի ազգաբնակչութեան ճնշող մեծամասնութիւնն էին կաղմում, առանց դժւարութեան, կիրականացնէին այնպիսի օրէնքներ, որոնք որ նրանց համար աւելի օգտակար կլինէին և այդ ճանապարհով զնալով, աստիճանաբար կիրականացնէին սոցիալիստական իդէալը: Հասկանալի է, որ բուրժուազիան վախենում է աշխատում է ճնշել Պարիզի և ուրիշ արդիւնաբերական քաղաքների այդ տեսակի ձգտումները, և նա այդ նպատակին հասնում է, ուժեղ կերպով պաշտպանելով ամբողջ երկրի վարչութեան ժայրահեղ կենտրոնացման զաւապարը, թող չտալով նրա անջատ-անջատ մասերին ինքնուրոյնութիւն: Շնորհիւ այդպիսի սխտեմի կիրառութեան, ընտրութիւնների ժամանակ գաւառները, զիւղերը և շէներք գերակշռում են մեծ քաղաքներին, վերջիններումս տղէտ գիւղացիները

մանք քաղաքները գտնելով կղերականների, բուր-
ժուազիայի և ազնականների ազդեցութեան տակ
յաղթում են գիտակից պրօլետարիատին։ Այսպիսով
ուրեմն, այն տեղերում, որտեղ գոյութիւն ունի ընդ-
հանուր և հաւասար ընտրական իրաւունք՝ տիրող
գաղապարների համար միակ փրկութիւնը, միակ մի-
ջոյր որ իրանց դէմ «աւերիչ» վճիռներ չկայանան
մեծ քաղաքներին ինքնավարութիւնից զրկելն և
կենտրոնացման միջոցով նրանց կախման մէջ պա-
հելը։ Նրանք այդ բանը շատ զեղեցիկ կերպով
հասկանում են, հէնց իսկ այդ պատճառով էլ Պա-
րիզը՝ բաղձամարդութեան տեսակէտից Եւրոպայի
երկրորդ քաղաքը, տասնեակ տարիների ընթաց-
քում կառավարւում է պետութեան ձեռքով նշա-
նակած ոստիկաններով։

Իրա փոխադէն ինքնավարութեան միտքը բան-
ւոր գաղափարդի համար միւս ու արիւն դարձաւ
նա իր սիրելի Կոմմունայի համար օրէնստու իշխա-
նութիւն ձեռք բերեց, աւելին ասենք, նա ցան-
կանում էր այդ իշխանութեան մէջ տեսնել ժողո-
վուրդից ընտրւած և նրա առջև պատասխանատու
մի գործադիր մարմին՝ որը փոխարինէր իր չինով-
նիկներով ժողովրդին ճնշող բիւրոկրատիային։ «Կեցցէ
կոմմունան» բացառունչութեան մէջ զուգորդւում
էին, մշտական զօրքի ռէնչայումը, ամբողջ ժողովրդի
դիմումը, կողմնակի հարկերի դադարեցումը, համե-

մատական տուրքի ներմուծումը, եկեղեցու պետու-
թիւնից բաժանւելը, բոլոր ուսուցիչների, դատա-
ւորների և չինովնիկների ընտրութեան հիմունքի
փրայ պաշտօնի հրաւիրելը, աշխատաւորներին աշ-
խատանք նախելը և բոլոր քաղցածներին հաց ապրի։

Ինքնավար Պարիզը պիտի լինի մի օրինակելի
համայնք. որի օրինակին հետեւելով ֆրանսայի
միւս համայնքներն, ամբողջ ժողովուրդը, և նաև ամ-
ողջ մարդկութիւնը, գնալին դէպի լաւագոյն սոցիա-
լատական աշխարհը։ Մարտի 27-ին, երբ որ Կենտ-
րոնական կոմիտէն կոմմունայի նորընտիր անդամնե-
րին ժողովրդին ներկայացրեց և իշխանութիւնը նը-
բանց լանձնեց, քաղաքի փողոցներում սկսեց տիրել
մի անպատմելի ոգևորութիւն։ 200 հազար կուրճ-
քերից «Կեցցէ Կոմմունան» աղաղակը դուրս թաւա-
րատու հաններից և կտուրներից հաղարաւոր ձեռքեր
թաշկինակներ էին ծածահոււմ... «այդ նոր կեանքում
ամեն ինչ վերկենդանացաւ» (ըրում է Լիսազրէն—
«Ով մի ամիս առաջ յուսահատութեան մէջ էր՝
այժմ վառւում է ողևորութեամբ։ Մարդիկ, որոնք
իրար հետ ծանօթութիւն չունէին՝ ողջունելով մի-
միանց, իրարու ձեռք էին սեղմում։ Օ, մենք իրար
օտարականների տեղ չէինք դնում, մենք միեւնոյն աղա-
տութեան, միեւնոյն հաւատքի և միեւնոյն սիրոյ որդի-
ներն էինք... Բոլոր սրտերը ուրախութեամբ լրցւած
էին, բոլորի աչքերի վրայ արցունքներ էին փայլում»...

ՊՐՈՒԵՏԱՐԱԿԱՆ ԳԵՐԻՇԵԼՆՈՒԹԻՒՆ

Եւ Պարիզի ժողովրդի համար լուսաւոր օրը հասաւ, բայց, դժբաղտարար այդ օրը եղաւ շատ կարճատեւ, նրան յաջորդեց մութ, արիւնոտ գիշերը... Պարիզն ասէք նախազգալով սոսկալի արկածը, ամբողջ կրծքով մաքուր թարմ օդ էր շնչում և ծեռք բերւած երջանկութեամբ հարրում:

Կոմմունան իր վրայ դրւած չոյսերը կարողացաւ իրականացնել: Մի շարք զեկրեաներով ի կատար ածեցան բանւոր դասակարգի ամենից աւելի կարեւոր պահանջները: Գործարանները բանւորների սեփականութիւն վարձնելու խնդրում առաջին քայլը նա արեց: Եկեղեցու ծառայողներին ռոճիկ տալու գործը պետականից մասնաւոր խնդրի վերածեց. եկեղեցուն ծառայողը պէտք է ապրէր հաւատացեալների տւած միջոցներով միայն, ճիշտ այնպէս, ինչպէս մի ժամանակ ապրում էին առաքեալները: Մի քանի վանքերի ոճրագործ գործունէութեանը նա վերջ տւեց, նրանցից մի քանիստւմ գտան մարդկանց տանջելու համար հնարւած գործիքներ և կենդանի-կենդանի թաղւած մարդիկ: Նա զպրօցն ազատեց միաժամանակ թէ պետութեան և թէ եկեղեցու խնամակալութիւնից: Պետութեան կողմից գործ դրւած ճնշումները նա ոչնչացրեց և բոլոր հասարակական պաշտօններում վերեւից նշանակւած ծառաների փո-

խարէն դրեց հասարակութիւնից ընտրւած և նրա առջև պատասխանատու մարդկանց, որոնք բոլորն էլ առանում էին նոյնքան ռոճիկ՝ որքան որ ստանում էին սովորական բանւորները: Ամենաբարձր շէքերը, նոյնիսկ նախարարութեան մէջ, գրաւում էին բանւորներն ու քաղքենիները: Պարիզի ապստամբութեան դէմ լարւած ամենալար բամբասողներն անգամ, հարկադրւած էին իրանց գրած պաշկիլինքում այդ մարդկանց մաքրութեան առջև դուրս խոնարհեցնել: Այն ժամանակ, երբ ղեռ Պարիզի փողոցներում շարժը շարունակւում էր, երբ Կոմմունան դադարել էր գոյութիւն ունենալուց, այդ պաշտօնեաներից իւրաքանչիւրն իրան վստահացւած բոլոր հասարակական գումարների մինչև վերջին կուպէկներն աշխատում էր վերադարձնել Ֆինանսների մինիստրութեան, առանց մի բուպէ անգամ վախենալու, օր կարող էր ձերբակալել և զնդակահարութեան ենթարկւել: Նախարարներից մէկը, Տրէյ-նարը, որն ի վերջոյ ձերբակալւեց և զնդակահարւեց, Կոմմունայի անկումից երկու ամիս յետոյ, իր մահապատժից առաջ՝ մօտը մնացած 38000 ֆրանկը վերադարձրեց: Նրա այլին, որ ղեռ նոր էր հազել սգի շորերը, այդ փողերը վերադարձրեց այն օֆիցերին՝ որ նրա տնօրէնուն զնդակահարել էր տւել: Կոմմունայի գործիչները ոչ միայն իրանց մաքրութեամբ՝ այլև իրանց քաղութեամբ իրանց խի թշնամիներին հիացնում

էին: Նրանցից ամենից աւելի երեսիկներն իրանց արիւնքը թափեցին այն դադափարի համար, որն որ իրանց ուղեցոյցն էր հանդիսանում:

Եւ այդ «ռամիկ» մարդիկ, որոնց յեղափոխութիւնը Ֆէզիքական աշխատանքից կտրեց, Պարիզն այնպէս էին կառավարում, որպիսին երբէք, ոչ ոքի չէր յաջողուի Պարիզն երբէք այնպէս հանդիսատէս չէր քնել, երբէք այնպիսի օրինակելի կարգ չէր տեսել: Գողութիւնները, աւազակութիւնները և աւարը (առաջին անգամ այդ տեղի ունեցաւ փետրւարեան լեղափոխութեան ժամանակ) երկրորդ անգամ էլի դադարեցին, ասէք աւազակներն ու զոդերը իրանց բարձր զինքներ զրաւող և չաղ ոռոգիկներ ստացող ընկերներին: Գէտ միաւին Վեֆսալ զնայած լինէին:

Բուրժուական հասարակարգի ուրիշ տեսակի պակասաւոր առաւելութիւններն էլ զարմանալի արագութեամբ իջիք դարձան:

Պառնիկները, որ կապիտալիստական Պարիզում այնքան շատ էին՝ թողին Պարիզը և հետեցին հարկներին, հաւաքին և ամենից առաջ մասնաւոր սեփականութեան պաշտպան տարազիրներին: Նրանց փոխարէն երեսն եկան իսկական հերոս, մեծահոգի և անձնէր Պարիզուհիները, որոնք լիջեցնում էին հինաւուրց կանանց, և որոնք որպէս պահապան հրքեշապկներ՝ խնամում էին հիւանդներին ու վիրաւորներին, հերոսներին օղնելիս անվախ էին, անմահ գոր-

ծի համար պատրաստ էին իրենց կուրծքը դէմ առնու թշնամու գնդակներին:

Բանւոր դասակարգը ձեռք բերելով իր համար լաւագոյն կեանք և ազատութիւն՝ վերածնեց և ազատագրեց նաև Պարիզի ամբողջ հասարակութիւնը, ապագայում էլ ձեռք բերելով դերիշխանութիւն, կոտորածայ մարդկութեան փրկիչն ու առաջնորդը:

ԿՈՄՄՈՒՆԱՅԻ ԱՐԱՄ ՍԻԱԼՆԵՐԸ

Մենք վերեւում արդէն տասինք, որ Ֆրանսական պրոլետարիատը 1871 թւի ապստամբութեան ժամանակ դեռ բաւարար գիտակցութիւն և փորձառութիւն չունէր, կարն ասած, նա դեռևս շատ հրիտասարդ էր, որ կարողանար իշխանութիւնն իր ձեռքում պահել, այդ պատճառով էլ գործեց մի քանի ռիսայներ Կոմմունան:

Խօսենք նրանց մասին պարզ կերպով: Պրոլետարիատը չափաի ամաչի, զբանից արւած սխալների քննադատութիւնից նա կարող է ապագայի համար պատրաստականութիւն ձեռք բերել: Կոմմունան չկարողացաւ յետադիմականների դէմ մրցւած հոխւր հարկ եղած ճարպկութեամբ և հմտութեամբ տանել: Նա վախենալով այն բանից, որ չլինի թէ լեղափոխութիւնը կապած լինի ամբողջ երկրի աղղաբնականութեան գլխին՝ և միւս կողմից էլ կարծելով թէ, ամբողջ Ֆրանսիան ինքը կմիանայ ապստամբութեան՝

ստիճանափակեց մի բանով միայն, պաշտպանեց քաղաքը և թող չաւեց որ բուրժուական զօրքերը ներս խուժեն: Բայց նրան միմիայն աբազ լար- ձափողական գործողութիւնը և գաւառական մեծ արդիւնաբերական քաղաքների առանձին համայնք- ների տարերային ապստամբութիւնն ու օգնութիւնը կարող էին փրկել, այդ ապստամբութիւնները շնորհիւ անբաւարար աջակցութեան՝ կառավարչական խմբակը կարողացաւ հեշտութեամբ խաղաղացնել: Միմիայն թուացիկներով, որոնցով համաքաղաքացի- ներին էին դիմում և ասում, թէ, Պարսիկի յաղթա- նակը յանուն լաւագոյն կեանքի պէտք է բաշտին էլ եռանդ ներշնչի, չկարողացաւ ընդհանուր հրդեհի ա- ռաջացնել:

Բայց քանի որ Կոմմունան պաշտպանողական քաղաքականութեան դիմեց, ապա հարկաւոր էր նա- խատեսել, որ բուրժուազիայի ոյժերը գերազանց են, անրաժեշտ էր որ նրան հարկադրէին և զիջումներ անել ապին չպէտք էր թողատրէին որ գործերը ծալ- րահեղութեան հասնէին:

Դրա համար հարկաւոր էր մի լաւագոյն հան- գամանք օգտագործել, հարկաւոր էր Ֆրանսական պե- տական բանկը, որի մէջ էր գտնւում ախրող դասերի ամբողջ հարստութիւնը՝ խլելն: Այդպիսի ճանապարհով նորա կկարողանային բուրժուազիային պատերազմելու հնարաւորութիւններից զրկել և ստիպել որ նա անձնա-

ուոր լինէր լեղափոխական ժողովրդին: Կոմմունան ոչ միայն բանկում գտնւում ¹/₂ միլիարդ բուրժու- ական հարստութիւնը խլեց՝ այլև աւելի վաթթար գործ կտտարեց, նա արգելք չհանդիսացաւ, որպէսզի փողը բանկից չհանւէր ու ծիւրիւն չտրւէր և վերջինս էլ չկարողանար այդ իսկ փողերով ապստամբներին խաղաղացնել:

Յետոյ, հարկաւոր էր նախապատրաստութիւններ տեսնել ապագայ վճռական կռիւ համար, պէտք էր դաշնակից զօրք հաղմակերպել և դրա ղեկավարու- թիւնը յանձնել մի փորձաւոր և ուժեղ անձնաւորու- թեան, այն ինչ Կոմմունայի քաղաքի պաշտպանու- թեան գործը ոյ և ինչպէս ցանկանում էր՝ այնպէս էլ տանում էր, զանազան իշխանութիւնների կոր- րագրութիւններն իրար էին խառնւում: Անկար- գութիւնն ու դիսցիպլինայի բացակայութիւնն օր աւուր աւելի զգալի էր դառնում: Կոմմունան ղեկավար ուժերի մղած կռիւց գոհ չէր: Նրանց շարքերում կային հերոսներ, կային և շատ անխորձ օֆիցերներ, ինչպէս օրինակի համար Դիւ- վալլը և Յլորանը (երկուսն էլ վերսալյցիների դէմ մղւած առաջին կռոււմ ընկան) և ուրիշ շատերը: Պատւի և փառքի եռուից ընկնողներ, հպարտ դա- տարկարաններ, ստախօսներ և զղւելիներ շատ կային, որոնք լաւ բնաւորութիւնից զուրկ էին, իսկ ընդունակութիւններով էլ աւելի պակաս քան բոնա-

պարտեան բանակի առաջնորդները: Կոմմունայի զին-
ւոր և յայանի լեղափոխական Ռեկկին մի ուշադրաւ
դէպք է պատմում դրանց կեանքից, նա ասում է,
դաշնակից զօրքերի Շատիլիոնի մօտ կրած պարտու-
թեան նախօրեակին, սպրեյի 2-ին, քաղաքային տան
առջևի հրապարակի վրայ շարքերում կանգնել և հե-
ղեղանման անօրէից ամբողջապէս թրջւել էինք, իսկ
այդ միջոցին մի պատուհանից լսւում էր գլխաւոր
շտաբի մարդկանց երգի ծայնը, որ ասում էր, «խմենք,
խմենք, աշխարհի անկախութեան կենացը խմենք»:

Բայց կար և մի ուրիշ խումբ զեկալարներ, որոնք
ոչ միայն ընդունակ մարդիկ էին և անկեղծօրէն գոր-
ծին նւիրւած, այլև իմաստուն, փորձառու, մի քանի
լեղափոխական պատերազմների բովից անցկացած,
այգալիսիներն էին օրինակի համար մեր հայրենակից
լեհայիները Եարոսլավ Իոմբրովսկին և Վալէրի
Վրուբէլսկին: Իժմախտաբար պլսաւոր հրամանատա-
րի բացակայութեան պատճառով նրանց գործը դրած
չափերն 'ի զուր անցան, իսկ երբ գործի զեկալա-
րութիւնը նրանց յանձնեցին՝ արդէն ուշ էր:

ՊԱՐԻՋԻ ԵՐԿՐՈՐԴԻ ՊԱՇՏՈՐՈՒՄԸ.

Բուրժուա-ապնական խմբակը հետզհետէ մեծ
ուժեր էր հաւաքում. խայտառակ կերպով կնքւած
հաշտութեան գնով նա կարողացաւ գերութեան մէջ
զանուղ կայսերական խեղճուկ և չարիք ու փշուր եղած

գին ուրներին աղատել: Վերջիններս հայրենիքի թշնա-
մու և յաղթականների հետ միացած երկաթէ շղթա-
յով պաշարեցին Պարիզը. պրոլետարիատին ընկնելու
նպատակով յաղթական զօրքը միացաւ յաղթւածի
հետ: Բանից դուրս եկաւ, որ բանուր ժողովրդի զէմ
ունեցած արհամարհանքն անքան էր ուժեղ աղգալին
առեկութիւնից, որ թշնամու աղմկալից յաղթական
մուտքն ու ապագայի վրէժխնդրութիւնը փոխւեցին
խաղաղ իգիլլիայի:

Նապոլէոն փոքրի գերութիւնից աղտուած վախ-
կոտ, զլւելի և դաւաճած օճիցելները վնդեցին
իրանց կեղտոտւած փառքը բանւորական արիւնով
մաքրելու: Իժմախտ պատերազմում գեմորալիզացիայի
ենթարկւած զինուորներին արաղով հարբեցնում և
բաց էին թողնում կամմունիստների վրայ, որպէս ա-
նասուածների, մարդասպանների և հրծիգների վրայ:
Ապրիլի 2-ին Պարիզի մօտ տեղի ունեցաւ եզրալրաս-
պան քաղաքացիական կռիւ, որտեղ կոմմունիստները
չնայած իրանց հերոսութեանը, պարտութիւն պար-
տութեան ետեւից կրեցին:

Քաղաքի ամբողջութիւնները պաշտպանելիս, երբ որ
անօգուտ կերպով դուրս էին գալիս զէպի բաց
դաշտ գրոհի, իլլուր տեղը շատ ժողովրդական արիւն
թափւում, աւելի լաւ կլինէր, եթէ դրանց լօգս
ցնդայնէին. թշնամին աւելի և աւելի էր վրայ տալիս
և գնալով անդուծ կռիւները քաղաքին էին մօտենում,

որոնք յաճախ գերի ընկած կոմսուքներն սպանւելով էին վերջանում:

Վերջապէս պ.պ. «հայրենասէրները», որոնք զեռնօտիկ անցեալում, պրուսացիների Պարիզը ուժակոծելու ժամանակ պահանջում էին որ ամբողջ աշխարհը այդ «սրբապղծութեան» առիթով խռովէր, հրամայեցին իրանց իսկ զինւորներին որպէսզի Փրանսական թնդանօթներէն կրակեն հայրենի մայրաքաղաքի վրայ: Հրդեհների մի ամբողջ օղակով շրջապատուեց զժրախտ քաղաքը: Նրա պաշտպանների յօսը կտրուեալ տեղի տաւ օրհասական կուռի: Մայիսի 21-ին դաւաճանը բաց արեց քաղաքի դռները վերապլցեցների առաջ, իսկ միւս օրը 230,000 վերսայցիները թափւեցին քաղաքի փողոցները:

ՊԱՐԻԶԻ ՀՈԳԵԻՍՐՔԸ

Պարիզը բարբէկագներով ծածկւեց: Բոլոր զէնք կրելու ընդունակ մարդիկ կուռում էին մինչև վերջին շունչը որպէս առիւծներ, կուռում էին կոմսուսայի փառաւոր որդիքը, մատաղ տղաներ, որոնցից հազարաւորներ իրանց թոյլ օեղբերով զէնք վերցրին, կուռում էին քաջ պարիզուհիները, որոնց մասին այն ժամանակայ աւելիական բուրժուական մի լրագիր գրում էր, թէ, «էթէ Փրանսական ժողովուրդը բաղկանար միմիայն կանանցից, ապա ինչ սարսափելի ժողովուրդ կը առնար նա»: Զինւորները պէտք է զրոհով վերցնէին

տառն տան ետէից, փողոց փողոցի ետէից. մայիսի 23-ին վերջապէս վերցւեց վերջին բարբէկադը:

Ընկաւ այն քաղաքը, որ լեղափոխութեան ավանգարդն էր հանդիսանում, նա ընկաւ փառահեղօրէն, մեծութեամբ, կուռով մինչև վերջին հնարաւորութիւնը: Սարսափ ու պառկաւանք է տիրում, մեղ էր որ կարգում ենք հրդեհների բոցերում մեռնող արդ զիւցազուկների մասին, որոնցով ուզում էին թշնամու շարժումը կանգնեցնել: Մեռնում էին նոքա մերթ հիացման արտայայտութիւնն երեսին, մերթ լայտնի հռովմայեցի հասարակապետականների քար հանգստութեամբ: Ահա թէ Լիսագրէն ինչպէս է նկարագրում կոմսունայի ծերունի զինւորական նախարար Դելեկլիզի մար:

«Արեգակը թաքնւեց հրապարակը շրջապատող տների ետեւում: Դելեկլիզը առանց նայելու թէ զարիս են իր ետէից գնում էր միատեսակ քաղերով դէպի Վոյլթերի դրօսափայլք տանող նաւապարհը, այնտեղ ոչ որ չկար: Նա մօտեցաւ դառարկւած բարբէկադին, ծուեց դէպի մախ և անցկացաւ կամուրջի քարերից շինւած պատնէշը վերջին անգամ մենք տեսանք այդ մօալլ և սպիտակ մօրուրով շրջանափակ և դէպի մահը դարձւած դէմքը: Յանկարծ Դելեկլիզը անյայտացաւ, նա զնգակից կայծակնահար ընկաւ»:

Պարիզի մահւան դէմ մղած կռիւ օրերում ընկաւ նրա ամենալայտնի պաշտպան Եսթրայսի Դոմբրովսկին:

Կամաւորները նրա մարմինը կարմիր դրօշակի մէջ փաթաթելով՝ և գիշեր ժամանակ՝ շահերի լոյսերի տակ տարան և ազատութեան սեան կողքին դրին: Ամբողջ բատալիոնը շրջապատեց առաջնորդի դիակը, և ամեն մի զինուոր հերթով համբուրեց նրա նակապը: Նրան յետոյ թնդանօթների գոռգոռոցի տակ թաղեցին Պեր-Լաշէզի գերեզմանատանը:

ԱՐԴԱՐԱԻԹԵԱՆ, ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՐԳՈՒ ԿԱՆՈՆԻ ԳՈՐԾԸ ՅԱՂԹԱՆԱԿՈՒՄ Է:

Երբ որ «ամենաբնական զօրքը» Պարիզ մտաւ, թիէրն ասաց, «արդարութեան, օրինականութեան, մարդկայնութեան, քաղաքակրթութեան և կարգ ու կանոնի գործը յաղթանակում է»։ «Լիուլի վարձագրութիւն պիտի լինի: Դա պէտք է օրէնքով կատարուի, յանուն օրինականութեան և համաձայն օրէնքների»։ Եւ բուրժուա դիկտատորի խոստումը կատարեցաւ: Երկու շաբաթ շարունակ Սերվանի մէջտեղում հոսում էր մի ուրիշ կարմիր դետ, սպանւած պարիզցիների արեան դետը: Գերի վերցւածներին հարիւրներով ու հազարներով էին գնդակահարուծ: Երբ որ հրացաններից սպաննելը ժանձրացրեց՝ նոքա

սկսեցին անպէն ամբոխին թնդանօթի ռումբերով ոչնչացնել: Այդ բանը լուրջ հանդիսաւորութեամբ էր կատարւում, մահապատիժների ժամանակ ներկայ էր լինում քահանան և ըթի տակից սպանւող մեղաւորների հոգու փրկութեան համար աղօթքներ էր մըթմըթում: Ուշագրութիւն չէին դարձնում ոչ սեռի և ոչ էլ հասակի վրայ, կոմունայի կանայք, որոնք իրանց քաղութեամբ և դորժին նւիրւածութեամբ գերազանցեցին իրանց որդիներին, ամուսիններին, եղբայրներին և օրրախաններին՝ նրանց հետ հարիւրներով ընկան: Երեսներին սպանում էին, տեսնելով նրանց մէջ ապագայ վրէժխնդիրներին և յեղափոխականներին, ժերոնիներին էին սպանում, որպէսզի չլինէր թէ նոքա երկու բանուորական ապստամբութիւններից յետոյ սպասէին նաև երրորդին: Համաշխարհային պրոլետարիատը երբէք չէ մոռանալու այն հանդամանքը, որ իր ամեն մի ապստամբութիւնը բուրժուապիայի դէմ պարտութեան գէպքում, իր տասնեակ հազարաւոր եղբայրների տանգանքներով և անպոթ սպանութիւններով է քաւելու, և ինչպէս բանաստեղծն է երգում, «Խոստացւած երկիրը կարմիր ծովի—արեան ծովի էն կողմումն է» գտնւում:

Դեռ սկարզի ու կանոնի» յալթ՝ նակը տարւած չէր, երբ ժողովրդի արեան կարմիր ծովի մէջ նորից սկսեց թաղաւորել: Վերապից վերապարձած, վռնդւած, բուրժուական բարոյականութիւնը: Յաղթողների սր-

դան «Journal de Paris»-ին տեղեկով այդ բարոյա-
կանութիւնը՝ չկարողացաւ զսպել իր դարմացքը և
փերսալլցիներին յիշեցրեց Տացիտի գրած հռովմէական
սլաւութեան մի կտորը:

«Սոսկայի կռիւց մի օր յետոյ, դեռ կռիւ-
ը վերջացած, արդէն ստորացած և փչացած հոռմը նո-
րից սկսեց անառակութեան նահնի մէջ սուղւել, որը
նրա մարմինն աւտում էր և հողին էլ փչացնում,
մի կողմից տեսնում էր կռիւ և ուրիշ, իսկ մի-
ւրից հարբեցողութիւն և անառակութիւն»:

Կոմմունիստների նշշւած առաքինութիւնն այդ
տեսակի կերպարանք ունէր: Վերջին բարրիկադի առ-
կումից մի քանի օր յետոյ մասսայական կոտորածը
դադարեց, բայց անգթութիւններն ու սպանու-
թիւնները դեռ չվերջացան, առանց հարցաքն-
նութեան, առանց պաշտպանութեան, առանց-
վկանների և նոյնիսկ առանց դատի՝ շարունակում
էին հարիւրաւոր մարդկանց կոտորել: Կոմմունայի
նշանաւոր հերոսներից մէկին, Վարլէնին կեղտո-
ւորտեսութեան միջոցով ծերբակալեցին և զինուոր
ների շարքերի մէջ քշեցին: Երկու ժամւայ
տանջալից երթից յետոյ, նրա գեղեցիկ գլուխը արիւ-
նով ծածկւած մի մսաղնդի կերպարանք ստացաւ
և աչքի մէկն էլ գուրօ հոսեց: Նրան «դատող» գնե-
րայի հարցին, թէ նա ընդունում է իրան վերադ-
աւած մեղքերը, և ճիշտ է որ ինքն է Վարլէնը, մար-

տիրօսը հպարտութեամբ պատասխանեց. «Այո՛, ես
եմ Վարլէնը, այս՛, ես թէ Կենտրոնական Կոմիտէի և
Թէ Կոմմունայի անդամ եմ» ու նա թւեց բոլոր իր
կատարած գործերը: Նրան բարձրացրին Մանմարթ-
քա լեռան վրայ Բուրժուական անշան գրող Մակ-
սիմ-Դէկանը նրա մահը հետեւեալ կերպով է նկարա-
գրում. «Վարլէնը ուղիղ կանգնած էր կախ տաւած
ծեռներով, նա հպարտութեամբ դիտում էր ափո-
խին: Երկու զինւոր մօտեցան նրան և մի քանի
բալլի վրայից ուղղում էին կրակել՝ բայց նրանց կրա-
կը նպատակի չհասաւ, մօտեցան ուրիշ երկուսը և
կրակեցին, Վարլէնը սրտից մահացաւ կերպով վիրա-
ւորւած ընկաւ կողքի վրայ և էլ չշարժւեց: Այդ-
պիսի զարմանալի անվեհերութեամբ մեռաւ Վարլէ-
նը. նա մահւանից առաջ գօչեց, «Կեցցէ Կոմմունան»:

Երջանիկ են նօքա ոլբեր գեղականների տակ ըն-
կան, երջանիկ են նօքա՝ օլբեր ընկնում են և իրանց
շրթունքներից բացաղանջութիւններ են թռցնում
յանուն իրանց իդէաների:

Գարիւր անգամ աւելի սարսափելի էր այն
մարդկանց վիճակը, օլբեր որ բուրժուազիայի վրէժ-
խնդրութեան ենթարկւեցին յետոյ: Կոմմունայի
կանանցից մէկն ասում էր, «աւելի լաւ է ես իմ
հարազատին դադաղում տեսնեմ, քան թէ վեր-
սալլցիների ծեռքում»: Կապկպած գերիների խմբակ-
ներին Վերսալլ տանելիս՝ հարածում, սպանում և

տանջում էին, իսկ այն տեղ էլ նրանց սպասում էր «կարգին մարդկանց» փոմակր, ռուկի երիտասարդութիւնը, բուրժուաները, ազնւականները, օֆիցերները, նրանց կիները, առաքինի սիրուհիները. զանազան ակասակի պոռնիկները, ալլֆոնսները, ալդ ամբողջ փոմակր ընկնում էր «մարդասպանների», «աւաղականների» և «հրձիգների» վրայ, թքում էր նրանց տանջալից դէմքի վրայ, թափում և ծաղրանքի էր ենթարկում նրանց: Օֆիցերների «կանաք» հովանոցներով վիրաւոր կոմմունարների վերքերն էին արորում և մեռածներից վերցնում էին արիւնոտած պաշտանական շորերը: «Քաղաքակրթութիւնը լաղթանակում էր»:

Այն մասին, թէ տասնեակ հազարաւոր զերիներ աղքատութեան ու բանտային տանջանքներում ինչէր քաշեցին և կամ կանանց ու երեխաների կտոր-կտոր անւելու մասին չպէտք է գրենք, լիշենք միայն կոմմունայի անդամներից մէկի որդու Ռան-վիէրային, որին կտոր կտոր արին այն պատճառով՝ որ նա չկամեցաւ կամ չկարողացաւ ցոյց տալ թէ որտեղ է իր հայրը: Մի քանի տարի շարունակ կեղծօրէն երգում անող «գոտաւարան» լեղափոխականներին մահւան, բանտի արքորի և տաժանակիր աշխատանքի էր ենթարկում: Մի քանի տարի շարունակ լաղթութիւնը տանող «արդարութիւնը» լողանում էր լեղափոխականների արիւն մէջ, որոնք հպարտու-

թեամբ և տրհամարանքով էին լսում հանւած ոնրա-դործ փնիտները...

Լուիսպա - Միշէլը բացականչեց, «Ոչ ցանկանում եմ պաշտպանւել և ոչ էլ ցանկանում որ ինձ պաշտպանեն»:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ
ԿՈՄՄՈՒՆԱՅԻ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թւենք բուրժուազիայի վրէժխնդրութեան արգիւնքները, ամենաքիչը 30,000 հոգի սպանւած է (որոնցից հուռւմ բնկել են միայն երկու հոգի), 5,000 բանտերում տանջւած, 15,000 արքաւած բանտարկութեան ենթարկւած կամ ըշւած: Ընդամենը 50,000 զոհ: Պարիզի բնակչութիւնը 100,000 հոգով պակասեց, իսկ քաղաքի կէսը թնդանօթներով Գանդւեց կամ փողոցային կոիւների ժամանակ ալուեց:

Այժմ տեսնենք կոմմունայի «ոնրադործութիւնների թիւը, որի արամների համար» սպանիչները մինչև հիմայ էլ սղոյ շորեր են հագնում. նրկու գէներոյ, որոնց՝ իրանց իսկ զինւորները զնդակահարեցին, մի քանի լրտեսներ և դաւաճաններ, մի քանի լոմինիկիւններ, սրանք սպանւեցին այն ժամանակ, երբոր գւարդիայի զինւորները թաղւած աեղերից էին կրակում, վեց հոգի կնեագներ, դրանց սպանեցին այն կոմմունայները՝ որոնք որ մալիսեան կուռի վրէժ էին լուծում, մի քանի տասնեակ ոտականապետներ,

պրոֆակտորներ, չինովնիկներ և քահանաներ, տոբա-
սպանել էին այն ժամանակ՝ երբ օր կոմսունան ընկնե-
լու վրայ էր և ամբողջ ցաւից ինք իրան կոտորել էր:
Ընդամենը մօտ 90 զոհ:

Վերջապէս վերսալլի մարդասպանների առաջ-
խաղացումը կանգնեցնելու համար այլևաժ են մի-
ջանի շէնքեր: Պէտք է նկատել որ կոմսունարները
ոչ ոքի չէին տանջում, ոչ ոքի ծաղրի չէին ենթար-
կում, իսկ բռնաւած գինւորների և օֆիցերների վրայ
նայում էին որպէս իրանց դժբախտ և մօրդուած եղ-
բայ: Երբ վրայ:

**ՄԱՐԻԿՈՒԹԵԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ՄԵՆՔ ԿՈՒԻՒ ՄՏԱՆՔ**

Ամբողջ աշխարհի բուրժուազիան ուրախու-
թեան աղաղակներ բարձրացրեց մղկով Ֆրանսական
կառավարութիւնը գէպի նորանոր սարսափներ և
սպառնութիւններ: Կզերական, ազնւական և բուրժուա-
կան մամուլի ոռնոցները մի հրէշալիւն օրգիւյի
փոխւեցին, որովհետեւ այդ կարգապահ և «առ-
դարամիտ» մարդիկ գիտէին, որ պարիզի ապ-
ստամբների բարձրացրած դրոշակը «համաշխարա-
յին ռամկավարութեան դրոշակն էր և որ կոմ-
սունան այդ կռիւն սկսեց յանուն մարդկութեան
աղատապարտութեան»: Այս բանն առում էին իրանք
կոմսունայի թշնամիները: Նորա լաւ գիտէին որ

կոմսունան բոլոր երկրների լեղափոխականներին եղ-
բայական ձեռք մեկնեց և թույլ էր տալիս նրանց
բարբիկապների վրայ մղւող կռւի պատւին արժա-
նանալ: Խաւարի ծնունդները գիտէին որ կոմսու-
նան ամբողջ մարդկութեան ավանդարդ մարտիկն է,
նորա կարծում էին թէ ամբողջ կարմիր ինտերնա-
ցիոնալը նրա արեան մէջ խեղդւեց, որ դրանով
իրը թէ «չահել, քաղցած՝ բայց ուժեղ մարդկանց
կողմից» խաբելւած, փթած, ուտելուց տաղած և
հարբող» մարդկանց սպառնացող վտանգը երկար
դարերով լեռ մղւեց: Փրանսական բուրժուազիան
պահպանեց նոյն իսկ հասարակապետութիւնը: Բայց
միթէ նա պրոլետարիատի պարտութիւնից յետոյ
պէտք էր փախենար նրանից (հասարակապետութիւ-
նից):

Միշտզգային պրոլետարիատն էլ հասկացաւ թէ
ի՞նչ բան էր կոմսունան: Ինտերնացիոնալի Գլխաւոր
Խորհուրդն իր մանիֆեստում ահա թէ ինչ էր
գրում Ֆրանսիայում տեղի ունեցած քաղաքացիա-
կան կռւի առթիւ. «Բանւորական պարիզն իր կոմ-
սունայով, որպէս նոր հասարակակարգի աւետարներ՝
մշտական յարգանքի պիտի արժանանալ: Նրա մար-
տիրոսները պէտք է բանւոր դասակարգի մեծ օրը-
տում ապրեն: Պատմութիւնը դահիճներին դամեց
արդէն խայառաւակութեան սիւնին, որից նորո
իրանց քահանաների ազօթքներով երբէք պոկ զալ

չեն կարող: Իսկ երբոր 1899 թւին ամբողջ Եւրոպայի կապիտալիստները Պարիզում միջազգային ցուցահանդէս տօն սարքեցին՝ այդ իսկ միջոցին լարութիւն առած ինտերնացիոնալի սոցիալիստական համագումարը որ խորհրդակցում էր՝ պսակներ դրեց «դաշնակիցների շէնքին» վրայ, որի կողքին կոմմունարները թնդանօթների ումբերով սպանւած էին, իսկ ի նշան այն բանի, որ կոմմունարի համար վրէժխնդիր եղողները դեռ կենդանի են՝ հաստատութեան վերին կողմից լազթութեան գոռակ կախ աւին:

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԻ ՎՐԷՃԻՆԴԻԲՆԵՐԸ.

1871 թւին ստացւած սոսկալի վերքը բժշկեց արդէն: Բայց միջազգային պրոլետարիատը յիշում է և կլիշի, որ ինքը երդւեց ամբողջ աշխարհի շահագործողներից—կոմմունալի սպաննիչներից վրէժ լուծել: Այդ վրէժխնդրութեան համար նա պատրաստութիւններ է տեսնում, նա իր ոյժերն է կազմակերպում նա կոմմունալի առաջադրած խնդիրներն է վերկենդանացնում, անապարհ է բաց անում իր համար ձեռք բերելով գեմոկրատական հասարակապետութիւն, ամբողջ ժողովրդին զինելով իրաւունք, եկեղեցու պետութիւնից բաժանում, լայն ինքնավարութեան օգնութեամբ պետական բռնութիւնների ոչնչ սցում և նշանակալի բիւրօկրատների

պաշտօնից հեռացում և նրանց փոխարինում ժողովրդական ընտրելիներով: Վրէժխնդրութիւնը պիտի կայանայ բոլոր բուրժուական պետութիւնների զաւրնկեցութեամբ, ըսնւոր ժողովրդի գերիշխանութեան յայտարարումով, մասնաւոր սեփականութեան ոչնչացումով և սոցիալիստական հասարակարգի ներմուծման մէջ: Այդ վրէժխնդրութեան մասին ձենը մասնատանի բանօրներս էլ պէտք է լիչենք: Մենք պետք է ժխտենք, կազմակերպւենք, նախապատրաստւենք իրաւունք ձեռք բերելու համար մղւելիք կռիւն մասնակցելու համար, աշխատենք սոցիալիստական նիւսկան պատրաստականութիւն ձեռք բերել, որպէսզի լեղափոխութեան կարողանանք գլխաւորել աւելի ուժեղ կերպով քան 1871 մեր Ֆրանսացի եղբայրները:



- 23) Ն. ԼԵՆԻՆ. «Գաղաքական կուսակցութիւնները Ռուսաստանում և պրոլետարիատի վերաբերմունքը»—գինը՝ 5 ր.
- 24) ՎԻԼԷԼԻՄ ԼԻԲԿՆԵՆՏ. «Սարգսն ու ճանձները»—գինը՝ 3 ր.
- 25) Վ. ԳԵՐՃԻՆՏՅԵՆԻ «Անգլիացիներն ինչպէս են ճանաչում իշխանութան տակ իրենց գիտարկներին»—գինը՝ 6 ր.
- 26) [Redacted]—գինը՝ 6 ր.
- 27) [Redacted]—գինը՝ 6 ր.
- 28) [Redacted]—գինը՝ 6 ր.
- 29) [Redacted]—գինը՝ 6 ր.
- 30) Ա. ԳԱՐԻՆԵԱՆ. «Կովկասի պրոլետարիատի պատմութիւնը Կարճ Մամէզ և Աղիզէկով»—գինը՝ 5 ր.
- 31) «Կարմիր Աստղ» (երկրորդ հրատարակութիւն) —գինը՝ 1 ր.
- 32) ԷԻՆԶ Է ԵՆԼԵ ԿՈՒՄԵՆԵՐԵԱՆ «Եղապարհութիւնը»—գինը՝ 3 ր.
- 33) Ա. Ի. ՈՒԼԵԱՆՈՎ (Լենին) Համառոտ կենսագրութիւն (պատկերով) —գինը՝ 3 ր.
- 34) ԲԱՆԻՈՐ ՀԱՅ. «Կարմիր բանակ»—գինը՝ 6 ր.
- 35) ՎԱՏԻՆ. ԷԻՆԶ բուն Է կոմունիստներ»—գինը՝ 3 ր.
- 36) ԳԻՅ. «Գիւղական կոմունիստներ»—գինը՝ 3 ր.
- 37) Ա. ՏԵՐԵԱՆ. ԷԻՆԶ Է ասում Լենինը զինվորներին»—գինը՝ 5 ր.
- 38) ԲԻՍԵՐԵԱՆՍԿԻ. ԷԻՆԶ Երկրորդ—գինը՝ 2 ր.
- 39) Ա. ՄԱՐՏՈՒՆԻ. «Ազգային հարցի առթիւ»—գինը՝ 5 ր.
- 40) Ա. ԳԱՐԻՆԵԱՆ. «Կովկասեան պրոլետարիատի պատմութիւնը Ե) Արեւելի ջապարհէ»—գինը՝ 5 ր.
- 41) Ա. ԳԱՐԻՆԵԱՆ. «Հայաստանի ապագան»—գինը՝ 5 ր.
- 42) ԷԲԱՐԵՐ 26 կոմունիստներն են յիշատակին».
- 43) ԵԱՂ. ԼԱՂԱ. «Երկու մահն պատկեր».
- 44) ԱԼ. ՄԱՐՏՈՒՆԻ. «Միջաշէլ Նալբանդեան»—գինը՝ 10 րուր.
- 45) «Հայրենիք վերադարձած զինվորներն».
- 46) Ե. ԵԱՐՈՒԼԱՎՍԿԻ. «Հայրն ու Որդին» (Վիլիս և Գալ Լիբկնեշները)—գինը՝ 3 րուր.
- 47) ԳԱՆԵԿՈՒԳ. «Կոմունիզմ և Դեմոկրատիզմ»—գինը՝ 3 րուր.
- 48) ՄԱՂԻՆ. «Հոգեւորական յեղափոխութիւնը և ազգային հարցը»—գինը՝ 6 րուր.
- 49) ԳՈՆԿՈՂ. «Փարիզի կոմունիստներ»—գինը՝ 10 րուր.
- 50) Ռուսաստանի Սոցիալիստական Փնդեցատիւ Խորհրդային Հանրապետութեան Սահմանադրութիւնը. 2-րդ հրատարակութիւն—գինը՝ 2 ր.
- 51) ԱԳԱՐԻՆԵԱՆ. «Անգլիական իմպերիալիզմը և Արեւելքը».
- 52) Ա. ԲԵՐԵԼԻ. «Բրիտանիականութիւն և սոցիալիզմ»—գինը՝ 6 րուր.
- 53) ԲՐԱՂԻ. «Գործնական սոցիալ-դեմոկրատները»—գինը՝ 6 րուր.
- 54) ՕՍԿԱՐ ՈՒՆԵԼԻ. Սոխակն ու վարդը—գինը՝ 5 րուր.
- 55) ՕՍԿԱՐ ՈՒՆԵԼԻ. Եսասեր Հնկան—գինը՝ 5 րուր.

- 56) ԳԻՅ. Դիւղական համայնքից զէպի սոցիալիստական կոմունիստներ

- 1) Ն. ԼԵՆԻՆԻ. Գեղարվեստական լուսանկարներ:
- 2) Ն. ԼԵՆԻՆԻ. Ինքնակենսագրություն:
- 3) Կ. ԿԱՐԷՆ. Ճեղքափոխություններն են հաճախ թափանցումներում: Գեղարվեստ:

Իրադրություն:

- 4) Գ. ՄԱՐԿԻՍ. Բաղադրական պատկերազարդումը Ֆրանսիայում:
- 5) ԿԱՐԵՆ. Կ. Մարքսի անտիկառիտիկական աշխատանքները:
- 6) ԳԼԵՆԵՆՍԿԻ. Մարքսիզմի հիմնական խնդիրները:
- 7) ԳՐԻԳՈՐԻԱՆ. Ցարիզմն են լուսանկարում:
- 8) Գ. ԼԵՆԻՆ. Բուլժուարիայի հայտնաբերությունները:
- 9) ԿՈՂԼՈՆՏԵՆ. Ընտանիքի և կոմունիստական հասարակությունները:

- 12) ԼԻՆԿՆԻՆՍԿԻ. Ներքին աշխատանքներ:
- 13) ԿՐԻՍՏՈՒՄՆԵՆ. Ժողովրդական կրթությունը և դեմոկրատիան:

- 15) Փ. ԼԵՆԻՆ. Կոմունիզմի սկզբունքները (Կոմունիստական Միության հիմնական խնդիրները):

Իրեն է 10 րուր.

<< Ազգային գրադարան



NL0409737